1000	900 2700		
900	1000 2900		
800	1100 3000		
700	1200 3100		
600	1300 3200		
500	1400 3300		
400	1500 3400		
300	1600 3500		
200	1700 3600		
100	1800 3700		


գ իը իդ ձր ձդ ր է շ իև իս ձգ ձս գ
 ձգ ր է շ իև իս ձգ ձս գ ր իե իր ձե
 իև իս ձգ ձս գ ր իե իր ձե ձգ ը գ իը
 գ ր իե իր ձե ձգ ը գ իը իդ ձր ձդ ր
 ձե ձգ ը գ իը իդ ձր ձդ ր է շ իև իս
 իը իդ ձր ձդ ր է շ իև իս ձգ ձս գ ր
 ր է շ իև իս ձգ ձս գ ր իե իր ձե ձգ
 իս ձգ ձս գ ր իե իր ձե ձգ ը գ իը իդ
 ր իե իր ձե ձգ ը գ իը իդ ձր ձդ ր է
 ձգ ը գ իը իդ ձր ձդ ր է շ իև իս ձգ
 իդ ձր ձդ ր է շ իև իս ձգ ձս գ ր իե
 է շ իև իս ձգ ձս գ ր իե իր ձե ձգ ը
 ձգ ձս գ ր իե իր ձե ձգ ը գ իը իդ
 իե իր ձե ձգ ը գ իը իդ ձր ձդ ր է շ
 ը գ իը իդ ձր ձդ ր է շ իև իս ձգ ձս
 ձր ձդ ր է շ իև իս ձգ ձս գ ր իե իր
 շ իև իս ձգ ձս գ ր իե իր ձե ձգ ը գ
 ձս գ ր իե իր ձե ձգ ը գ իը իդ ձր ձդ
 իր ձե ձգ ը գ իը իդ ձր ձդ ր է շ իև

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Բախտասոր կը համարեմ՝ զիս երբ կ'ապացուցանեմ թէ Եկեղեցի եւ Պետութիւն անջատ մարմիններ են:

Գարեբէ ի վեր, զիս թիչ Վաղարշապատի դաշտին մէջ կոթողուած կը մնայ փաստաւոր Սէջմիս-ճիւղը. համայն շարժումէն Մայր Եկեղեցւն, խորհրդանշանն ստիւծ Յեղին յաւերժականութեան, մինչ կէս ժամ անդին դէպ հարաւ տրեւեղք՝ կը տարածուի նորակազմ պետութեան կեդրոնը:

Վաղուց մեր Եկեղեցին ճանչցած է իր անջատ գիւրքը ու կատարած է իւր վերաբերեալ բարոյական գեղը: Սեր Կոթողիկոսները տարբեր Եկեղեցիներու պետերուն տիրականութիւնը երբեք



ՏԻՐԱՅՐ Մ. Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

չեն ունեցած, այլ հոգեւոր իշխանութեամբ ճոխացած՝ պատկառելի հեղինակութիւններ եղած են անոնք, տեսակ մը խոհեմ ու իմաստուն խորհրդականներ ժամանակակից թագաւորներու, ինչպէս Ս. Գրիգոր խորհրդակիցն էր Տրդատի, Ս. Յուսիկ Տրտնի, Մեծն Կերսէմ՝ Արշակի, եւ Ս. Սահակ՝ Վառձապուհի: Հայ Եկեղեցին ահաւոր եւ անողոր տիրապետութեան մը խորշիկ ձգտումները չունէր, Տապա աւետարանական պայծառ կեանքի մը քաղցր ճաշակները կուտար, ժողովրդապետական օրէնքներով եւ սահմանադրական կանոններով կը կառավարուէր, եւ իբր այսպիսի կենսունակ հաստատութիւն մը բնաւ արդէք չէր բլար քաղաքական մեքենայի կանոնաւորութեան: Հետեւաբար արդի քննադատներ՝ Եկեղեցւոյ եւ Պետութեան բաժանումը իբր մեկնակէտ ընդունելով ինչ սուր պարտեր որ կ'արձակեն օտար Եկեղեցիներու գէմ, նոյն ուղղութեամբ չեն կարող շարժիլ մերինին հանդէպ:

Ստորգ է որ քաղաքական իշխանութեան շեջումին տեսնելով Հայ Եկեղեցին զլուրի կը հանդիսանան մեր Հայրապետները, հոգեւոր ու աշխարհական հանդամանքներով, նոյն կրկնակ դերը կը կատարեն նաեւ մեր Կ. Պոլսոյ Պատրիարքները, մինչեւ ազգային վասնդուած նաւին խաղաղ նաւահանդիստ մը հասնիլը: Սակայն հարկն է որ այդպէս պահանջած է:

Արդ հասած է ժամը, եւ այսօր ունինք դարձ-

եայ թէ՛ Եկեղեցի եւ թէ՛ Պետութիւնն՝ անջատ
գոյութիւններով մեզի համար Եկեղեցին է հոգե-
ւոր կեանքի մարզարանը: Ասոնք երկուքը, բարոյա-
կան գեանի վրայ իրարու կ'օժանդակեն, ինչ որ կը
տեսնենք Ամերիկայի մէջ՝ ուր Եկեղեցի եւ Պետու-
թիւն բաժնուած են իրարմէ:

Անկո-Սարսոն երկուքը Պետութիւնն Անգլիա
եւս տարբեր մէթոս չկրնար որդեգրել, քանի որ
Ռուսիա իսկ, ուր Չարն էր կրեւապիտ, ՚ի ն պատ-
մաւածանք մերկացուց ու բաժնեց պետութիւնը Եկե-
ղեցիէն, արդէն Ֆրանսա նշոյն լրած է ժվրդ դա-
բու վերջի՝ իր Եկեղեցիութիւնէն ի վեր: — Եւրո-
քաղաքակերթ Պետութիւններն ալ նոյն ուղին պիտի
բռնեն:

Եկեղեցական իխանութիւնն ունի իր ասան-
ձին պաշտօնը. հոգիներու բարձրացման հետ զարժ
ունի ան Երկիւրի հմայքը կը ներշնչէ իսկ քաղա-
քական իխանութիւնը կ'ախտաբեր կերպիւր կ'երկնի
վերածել, եւ երկնային միասնական երջանկութե-
նէն առաջ կը ջանայ Երկր-Մարդկութեան վայն-
իւն առլ Երկրասր երջանկութիւնը, Տէրութեան
ամ պարզ ստացումը ին համաձայն թէ՛:

«Երկնիքի Արքայութիւնը ձեր մօրը, ձեր սրբին
մէջը (ուսելի՛ յոտակր) ՆԱԽ ԵՐԿՐԻ՛Վ ՎՐԱՅ Է՛»:

Ամերիկա, Ֆոստլը, Օգոստ. 18, 1923

ՏԻՐԱՅՐ Ծ. Վ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԲՕՄԲԷՆ ԵՒ ԻՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՔ



Թե՛ Էրբ են Հոյերն հաստատուել Բոմբէումն,
պա մտին հակառակ իմ բար պրպառմներն, ո՛չ
մի սաշոյ ակեղեկութիւն չկարողացայ դանկ. միայն
որոշ փաստեր եւ նշաններ վկայում են եւ հաս-
տատում որ Հոյեր նախ քան Անգլիացիներն Հրոյ-
կասանք զբուսէր հաստատում են եղել Բոմ-
բէումն եւ պարագիւտ փաճառականութեամբ: Անգ-
լիացիներն Հնդկաստանին աւր Լինկոլն յետոյ,
Հոյերն տարեց տարի աւելանում են եւ աւելի
հաստատում, որից յետոյ կարիք է զգացում
ունենայ եկեղեցի:

Ե Կ Ե Վ, Է Զ Ե

1736 թուին կատարուել է Ս Պետրոս եկե-
ղեցին արդեամբ Համայնացի Պ. Յակոբի իւր ծը-
նողաց յնչստակին, եկեղեցին անունելով իւր հօր
Պետրոսի անունովը, ինչպէս որ վկայում է Եկե-
ղեցւոյ բնի ճակատին զետեղուած արձանադրու-
թիւնն քալի վերայ, որը հետեւեալն է:

Կոչու Սրբ. եկեղեցւոյ. Յնուն. Արքմ. Արքմ.

Պետրոսի ի հոյրապաթն. Տն. Վեկառ.

Արք. Կթղիտի Ամն. Հոյ. արմք. Համա-

տանցի Պ. Յակովբին ի յշակ ճնողացն իւրոյ հօրն Պետրոսին մօրն Էսննպան խաթառին հիմնարկութեամբ եւ օժմամբ սրբոյ Աթոռոյն Էջմածնի նուիրակ Յակոբոս Արքեպիսկոպոսին. Յամի հն ՌՁԼՁ. եւ Սեպտ. Լ.:

Ս. Պետրոս եկեղեցին կառուցուած է Բօմբէի ամենաշանաւոր մասում, որը կոչուում է բերդ (Fort) մարզադետին կոչուած փողոցումն (Meadow's Street) որը Բօմբէի ամենայայտնի փողոցն ուր հաստատուած են Էւրոպական եւ Հեղկական յայտնի առեւտրական հաստատութիւնները: Սյս մասումն են գտնուում կառավարական գրեթէ բոլոր գլխաւոր հաստատութիւնները, Հեռագրատուն, Պօստ, Գատարան, Գանձարան, Թանգարան, նշանաւոր հիւրանոցներ եւ այլն: Եկեղեցւոյ շինութիւնը արտաքինից պիտան էլ լաւ տպուկորութիւն չի թողնում տեսողին վերայ, իրեն փոքրութեամբն եւ իրեն կից եկեղեցապատկան տան հին ձեւի շինութեամբը, սակայն ներքինը (մասն եկեղեցւոյ) պիտի տեսլ որ շատ գեղեցիկ եւ կրկիկ մի կառուցուածք է եւ ամէն մի այցելողի հմայք է պատճառում, մանաւանդ բնին եւ սեղանը, որը պատրաստուած է զուտ կապոյտ մարմարիտից, պատկերացնելով Յիսուսի Յարութիւնը, իսկ խաչկալն որը պատկերացնում է Վերջին Ընթրիքը: Եկեղեցւոյ

յատակը սալարկուած է ամբողջ զոյնզոյն քարերով. ունի ելեքորիկ հովհարներ (fans) եւ Էլեկտրիկ ճրագներ, իսկ ժողովրդի համար ավտոններ: Եկեղեցին է միակ պատասպարանը երթեւեկող պանդուխտների համար իրեն երեք սենեակներովը: Նորոգւել է 1801 թ. արդեամբք ազայ Յակովբ Յարութիւն Թաղեանցին, իւր Տիկնոջ յեշտատկին:

Հ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Գ

Եղած Հայերը բաժանուում են երեք մասերի. Տաճկահայեր (մեծ մասը) որոնք պարապում են գոհարավաճառութեամբ եւ ոսկերչութեամբ, Պարսկահայեր, (միջին մասը) որոնք ծառայում են զանազան առեւտրական հաստատութիւններում, Հրեկահայեր (4 բնուանիք) որոնք յաջող պաշտօններով ծառայում են երկաթուղային վարչութեան գրասենակումը եւ ունին լաւ դիրք: Չնայած որ վերջինները գրեթէ գաղափար չունին հայ կեանքի մասին, բայց պէտք է տեսլ որ ամեն կերպ ժիր են իրենց պարտականութեանց մէջ որպէս լաւ Հայեր եւ նոյնպէս որպէս լաւ եւ հաւատարիմ Լուսաւորչականներ:

Երկայ Բօմբէումը հաստատուած են բնուանիք 22, շունչ 78 եւ 8 ամուրի երիտասարդներ, բնգամներ 86 շունչ:

ԵՒԿԵՑՒՈՑ ԿԱՒՈՒՄԵՆԵՐԸ

Ունի 2 տներ, առաջինը կից եկեղեցւոյն, եւ երեք յարկանի, իսկ երկրորդն մի քանի քաջ 5-աւարութեան վերայ 2 յարկանի, երկուսն եւս նուիրւած բարերարներէց, որոնց հասոյթովն կառուարուած է եկեղեցին լիովին: Բացի այս 2 տներէց ունի եւ Սուրբ թի աւարակ եկեղեցւոյ գետինը, որը տարեկան շնչին հասոյթ է բերում եւ հին հանգստարանի գետինը, որը բաւական մեծ է եւ կան թաղուած միայն մի քանի անձինք: Յիշեալ հանդատարանի գետնի վերայ 1922 թուին շինուեց ինքնաշարժի (motor car) կայաններ, որն եւ բաւարար վարձք է բերում եւ որով հոգացուում են աղքատ ճանապարհորդներին ծախքերը:

Հ Ա Ն Գ Ս Ս Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Ինչպէս ցոյց է տալիս եկեղեցւոյ արձանագրական տոմարը կազմուած 1808ին, եկեղեցւոյ շինութիւնից առաջ բոլոր հայ ննջեցեալները թաղուելիս են եղել Անիի ազգայնագրական գերեզմանատունը մինչ 1810ին, եւ վերջին անձն որը թաղուած է Անի: Հանգստարանումը, եղել է Սրբազան Մկրտիչ Եպիսկոպոսն նւիրակ Ս. Ամենափրկչեան Վանաց Զուգարու 1810 թ. Հոկտ. 9ին. որանից յետոյ ինչպէս երեւում է Հայերն զգացուած լինելով Սրբազանի

առաջ հանգստարանում թաղուելուց, ունենում են իրենց սեփհական Գերեզմանոցը, Գիրգամ (Gergam) կոչուած թաղում, որը այն ժամանակ չէինում է Բոմբէի անմարդարնակ մասն, սակայն հիմա ամենաբազմամարդ թաղն է:

Այս գերեզմանատանը թաղուում են մեւելները 1912էն մինչեւ 1870 Սեպ. 13ը որից յետոյ կառուարութիւնը արգելում է յիշեալ գերեզմանատունը մեւել թաղելը: Յիշեալ թաղը այն ժամանակ լիւում է բազմամարդ թաղերից մէկն, իսկ այժմ նշանաւոր թաղերից առաջինն է:

Գիրգամ գերեզմանատանը թաղուած են շուրջ 19 անձինք, մեծ եւ փոքր բոտ արձանագրութեան եկեղեցւոյ տոմարին, բոլորն եւս առանց տապաշարերի, միայն մի քանիսն աղիւսով շինուած, որոնք վկայում են որ յիշեալ գետինը մի ժամանակ եղել է գերեզմանատուն: 1922ին այստեղ էր որ շինուեց ինքնաշարժի կայաններ: Երկրորդ հանգստարանն է «Սր Հանգստարանը» Մատուցապահուած տեղինը սկսեալ 1870 թւից: Բաւական մաքուր եւ շորհրէն մի հանգստարան է, գեղեցիկ մարմարեայ տապանաքարերով: Այս տեղ են գրանւում ամէն ազգի գերեզմանոցները առանձին առանձին բաժանմունքներով: Եկեղեցւոյ հետեւ է 12 մայլ գրեթէ 27 վերստ: Բացի յիշեալ երեք վայրերից ուր թաղուած են հայ մեւելներ, կան

Թւով 16 Թաղաւաններ եկեղեցւոյ բաժոււմբ, մար-
մարեայ տապանաքարերով եւ որոնց ասկնաՏէն
տապանաքարն է Մազապոցի Յովակի ՅարուԹիւն-
եանը 1819 թււին:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մինչ 1921 թ իւր. Բօմբէի եկեղեցական եւ այլ
ազգային գործերը ղեկավարուում էին Հասարակու-
թիւնից ընտրուած մի մարդու կամքով եւ հսկո-
ղութեամբ, սակայն 1921 թ ուի Մարտ 27ին տեղի
ունեցած Հասարակական ժողովումը որոշուեց ունե-
նալ եկեղեցական վարչութիւն կառավարելու եկե-
ղեցին եւ մի երկրորդ մարմին վարելու զաղթականներ
եւ ազգատներ զործեր: Ընտրուեցին ամէն մի վարչու-
թեան համար 5 անձինք, որոշելով որ ամէն մարմին
իր գործը վարէ առանձինն, միայն թէ ազգատա-
քանմբ հաշուետու է եկեղեցական վարչութեանը,
իսկ յիշեալը հասարակութեանը եւ ուն որից ամէն
մի մարմին շարունակուում է իրեն գործը կանոնա-
ւորապէս թողնելով ժողովրդին գոհ վիճակում:

Կ'արժէ յիշատակել 2 սննանց անձնուէր ծա-
ռայութիւնները, Ա. երկու վարչութեանց Ատե-
նապետ Պ. Հէնրի Միքայէլեանցին, որը ամէն ճիգ
եւ ջանք չի խնայում, եկեղեցւոյ բարեգործութեան
եւ գաղթականներին հանգստութեանը, իսկ Բ. Պ.
Լեւոն Սանտահանցին, որը իրեն բարջական աջակ-

ցութիւնը միշտ սրտմաղբում է գաղթականներին
դիւրութիւններ տալու եւ որոնց հանգէպ միշտ
երախտագէտ է Բօմբէի հայ հասարակութիւնը,
Էնչպէս կը վկայեն արձանագրութիւնները:

Պօմբէ, 1923 Յուլիս 4

Վիճակաւոր Բահանայ
ՅՈՎԱԿԻՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՒԱՆԱՆՔ

1. Աւստէ եւ վաստէ:
2. Պիսնէ մը ունեցիր:
3. Ծախքերդ գրի առ:
4. Պանայի հաւի ունեցիր, այսինքն խնայած
դրանդ դրամասան մէջ պահ դիր, ուրկէ տկոս ալ
կ'առնես:
5. Կեանքդ ապահովագրէ:
6. Տան մը տէր եղիր:
7. Կսակդ բրէ, որպէս զի ապագայ դժուարու-
թիւններ չբոլուս կնոջդ եւ զաւակներուդ:
8. Վհարումներուդ մէջ նեղապահ եղիր. պարտ
ունենալէ վախցիր:
9. Գրանդ ապահով տեղեր շահեցուր:
10. Քու բաժինդ նուիրէ բարի նպասակներու:



Թրբոա՛, քրբոա՛ դուն իմ քրնար,
Մասեերուս մէջ նրկուն, նիհար.
Թրբոսմեերովդ փափկահնչիւն՝
Սիբսս կը ծրնին սեհչեր անհուն:

Հնչէ՛, հնչէ՛ դուն իմ քրնար,
Ձիլ շեւեերուդ վրայ սրավար.
Կը սաւառնի հոգիս ալ վե՛ր՝
Անուրջներու բացած քելեր:

Գոռա՛, գոռա՛ դուն իմ քրնար,
Գոռ խազերով քու խանդավառ,
Կուրծքիս սակն ալ կը բորբոքի
Հուր մը անեւջ զեդուն կեանքի:

Երգէ՛, երգէ, ո՛վ իմ քրնար,
Գուն, իմ սիբսս ես, սի՛րս սիբսահար.
Երգէ կեանքի երզը հնչեղ,
Կեանքս ալ երզ մ՛է, ե՛րզ արսազեղ...:

ԳՐ. Հ. ԳԱՆՈՒՍԵԱՆ



Անատուրի այն ընդարձակ հողամասերուն վրայ՝ ուր երէկ սեւ ձեռքեր աւեր եւ ամայութիւն տարածեցին, ի զուր պիտի ոգեկոչենք երջանիկ անցեալը. երբ շինականը եւ քաղքենին իրենց զուարթ կենցաղին վայելքը ունէին. Որովհետեւ, աւա՛ղ, երկիրը դժբախտութիւնն ունեցաւ իր ճակատագիրը յանձնելու անխորհուրդ առաջնորդներու. որոնք բիւր բիւր մարդերու կորուստ պատճառեցին մարտական շարքերու վրայ եւ կամ խրամներու խորը*): Գերեզմանանային լուծիւնը հիմայ ստեղծ եւ սարսուռ կ'ազդէ դիտողին կամ պարզ ճարտորդին:

Արդ այս տխուր պատկերին քով ՚ի՞նչ մխիթարական է ծածանումը Յամանեան փառապանծ

(*) Միեւնոյն անխորհուրդ վարիչները Թուրքիան բաղկացնող սարբերուն մէջ ասելուքեան սերմ ցանելու ոգիւր զործեցին եւ խճականութեան ոգին ներմուծեցին ժողովրդեան խաւերուն մէջ: Ուսի իբրեւ իմասուն կազմակերպութիւն շնորհաւորելի է ԹՈՒՐԷՆԻ ՀԱՅ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ:

դրօշին այն ընդարձակ շէնքին վրայ, որուն ներքեւ մարդկային ստեղծագործ հանճարը իր փառքը կը հռչակէ հազարու մէկ արտադրութիւններով, որոնք պարզ գործաւորի մը աշխատութեան այդիւնք են. երէկ քուլայ մը մետաքսը կամ ոչխարին ու այժմին մարմինները ծածկող բուրդը այսօր գեղեցիկ սեռին վայելուչ զգեստն են եւ կամ ճոխ սրահներ զարդարող ընտիր գորգեր, հիւրասենեակներու կահաւորումը ամբողջացնող կերպասներ եւ ուրիշ շատ տեսակ գործածութեան յատկացուած իրեղէններ. Ո՞վ կուտայ մեզի այս հրապուրիչ առաւելութիւնները. Գիտակից աշխատութիւնը հանճարին հետ միացած ա՛նա այսպիսի հրաշակերտներ կ'ստեղծէ. Հետեւաբար երաժշտութեան պէս անուշ կը հնչէ ականջի՝ աղմուկը այն մեքենաներուն, որոնք ասուեղէններու գործարանի մը գոյութիւնը կը հաստատեն. եւ ի՞նչ քաղցր է դիտել առտուն կանուխ արեւածագի աղ անուշ պահերուն չործարաններու գոյութիւնը մատնանշող ծխաններուն արձակած ծուխի սուպերը՝ որոնք հայրենիքի զաւակներուն բարօրութիւն կը բերեն եւ երկիրը անոնց շնորհիւ կը բարգաւաճի փոխանակ օտարէն սպասելու իր սմէն պէտքերը.

Բայց Թուրքիա ունեցած է այդեօր անցեալին մէջ եւրոպական ճարտարարուեստի յա-

ռաջդիմութեան մասին նախանձ մը, կրցած է իւրացնել ժամանակին ոգին՝ որ արուեստներու մեծ գալի տալ կը հրամայէ. դժբախտաբար մասնակի փորձեր միայն կան սօղին անդին, հոս Պէյքօզի մէջ Թղթի եւ շիշի գործարաններ, հոն Քիւլիւք Զէրմէճի մէջ լուցկիի գործարան, քիչ մը հեռուն Իզմիտ եւ Գարամուսալ շայազի՝ եւ ասուեղէնի գործարաններ, որոնք հզօր մրցակցութիւն մը ի գործ դնելու անգոր եղած են եւ տեղի տուած են ի վերջոյ եւրոպական արտադրութիւններու:

Բայց ի՞նչ հարկ նախկին սխալներ եւ պետական թերացումներ առաջել. Թողունք որ անցեալը զլորի իր սայթաքումներու անդունդին մէջ եւ մենք յարգանքով ողջունենք յիշատակը Օգոստոսիաու ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՄԷՃԻՏԻ, որ շատ կանուխն ճարտարարուեստի յառաջդիմութեան խկապէս սիրահար 1841ին (այն է արաբական 1258 թուականին) հաստատել կուտայ գործարան մը շայտար Փաշայէ մի քանի տասնեակ քիլոմէթր հեռու Անատոլուի երկաթուղու զոյն վրայ շէրէքէի գիւղին ծովեզերքը կայարանին դիմաց. Գործարանին հոն հաստատուելուն նպատակը քառորդ ժամ հեռու կրային տուտ ջուրի ինքնաբուխ աղի մը գոյութիւնն է, որով տուտն անուխի շարժման մէջ եր դրուին մեքենաները.

1258էն մինչեւ 1300՝ գործարանը պատրաստած է մի տարեկաններ կանսցի գործածութեան յատուկ եւ տան կահաւորումի կերպաս: Տարիներու բնթացքին՝ մի քանի տնօրէններ յաջորդաբար պաշտօն վարած են: Ասոնցմէ վերջ 1306ին տնօրէնութիւնը ստանձնած է Ահմետ պէյ, որ աւելի զարգացուցած է գործարանը եւ արտադրական մասերու տեսակները աւելցուցած: Անոր մահէն վերջ Հաճի Արիֆ պէյի անձնուած է Վարչութիւնը, որ արդէն անձնական զանձուն Մեքրուշար Միւսիւրիւն էր (գլխաւոր մատակարար) սա երկու զբոգագոյ ծարաններ հաստատած է Հէրէքէի մէջ, նաեւ բրդեղէնի, ասուեակի, ասուեղէնի, գտակի ֆէս ճիւղերով, յիշեալը մինչեւ 1335 թուականին պաշտօն վարած է, իսկ անոր յաջորդած է արդի Տնօրէն Վսեմ Ակեաճ պէյ, որ հանգստեան կոչուած ծովային տեղակալ մըն էր: Ն. Վսեմութիւնը իր մեքենական փորձառութեամբ եւ այսպիսի բազմատեսակ գործի յատուկ ամէն կարողութիւնն օժտուած պատուական անձնաւորութիւն մըն է: Անոր շնորհիւ Հէրէքէի գործարանը այսօր նախանձնի դիրքի մը մէջ դրուած է, որովհետեւ Վսեմ Ակեաճ պէյ ոգի ի բուն կ'աշխատի գործարանին աւելի փայլ տալու եւ աւաջնակարգ դ'ր մը խաղալու ճարտարարուեստի ճիւղին մէջ: Ապրիլն, երկա՛ր

ապրիլն այսպիսի բարձր պաշտօնատարներ, որոնք պետութեան եւ ազգին փառք են եւ անոնց վարձքը ընդհանուրին գնահատուիմ է: Երանի՛ այն պետութեան՝ որ իմաստութիւնը կ'ունենայ այնպիսիներ պաշտօնի կոչելու:

Անցողակի յիշենք թէ համախարհային ահաւոր պատերազմը՝ որ ինչպէս ամէն յառաջդիմութեան արգելք եղաւ, նոյնպէս վնասեց այս փառաւոր հաստատութեան՝ շատ մը աշխատող բազուկներ խլելով անկէ եւ հետեւաբար անոր գեղեցիկ արտադրութիւնները նոսազեցնելով եւ այն որ երբեմն 1000է աւելի գործաւորներ կ'աշխատեցնէր, այժմ հազիւ 300ի մօտ են իր աշխատողներն: Այս պատճառաւ իր արտադրութիւնները պակսած ըլլալով ստիպուած է փոփոխել իր վաճառման մասնաճիւղերն Թուրքիոյ զանազան գլխաւոր քաղաքներուն մէջ, ինչպէս Տրապիզոն, Իզմիր, Սելանիկ, նոյնպէս Գահիրէ, Էն, Են:

Կը փափաքէի որ մեր երկրին փառք եղող այս մեծ գործարանը, որ օտարներէ իւր զնահատուած է այնքան եւ եւրոպական արուեստահանդէսներ, ստացած շքադրամներով մեծ համաբաւ շահած է, աւելի ընդարձակ իր գործունէութիւնը աւելի մեծ դրամագլուխով մը, ունենար նոյնպէս իրեն քոյր հաստատութիւններ զա-

նազան քաղաքներու մէջ, որպէս զի նոր Թուրքիան իր գործաւորի տարազովն ալ շահէր աշխարհի առեւտրական հրապարակին վրայ ընդհանուր համակրանք:

Համբո՞յր աշխատութեան արեւին տակ սեւցած ճախոյն՝ որ կը յղանայ ճարտարարուեստի նրբութիւններ եւ այն կը շտացած ձեռքերուն՝ որոնք շքեղ կտրպաններ կը յօրինեն:


* *

Հէրէքէի գործարանին արտադրութիւնները Պոլսոյ մէջ էֆրոնական նամակատան կարգը յատուկ վաճառատան մը մէջ կը ծախուին տարեկան 300.000 ոսկիի հասոյթ ապահովելով: Եւ այն վաճառատան ճնօրէնն է Սիրուն Էֆ. Տիօնեան, որ ոչ միայն սոցոյալին շրջանակին մէջ, այլ եւ մեր Թուրք հարեակիցներէն զնահատուած է, նոյն իսկ Վեհափառ Խալիֆային մասնաւոր համարման արժանացած իր բարեհամբոյր եւ ազնիւ նկարագրով, ժիր գործունէութեամբ եւ հանրային մարդու ամէն առաւելութիւններով, իբր Ազգերեսփոխան եւ ա՛յդամ խորհուրդներու եւ ժողովներու եղած է միշտ ուղղամիտ, անշահախնդիր, Բարեսէր էւ կրթասէր:

Հէրէքէի գործարանին նուիրուած այս հակիրճ գրութեանս իբր վերջաբան՝ կ'արժէ ներ-

կայացնել այստեղ սոյն հանրօգուտ անձնաւորութեան կենսագրական գծերը:

Սիրուն Էֆ. ծնած է 1870 Մայիս 1ին Օրթագիւղ, որդի Կարապետ Էֆ. Տիօնեանի, որ իր ժամանակին մէջ անուն մը ունէր իր մարտրկենցաղովն: Սիրուն Էֆ. ի ընտանեկան պարագաներն ալ տոհմիկի առաքինութիւնով օժտուած՝ լաւ առաջնորդներ եղած են կեանքին, յիշենք անոնցմէ ի մասնաւորի պատկերհան Արրահամ Սաքայեան, որ իւսկիւտարու մէջ իբրեւ նըկարիչ լաւ յիշատակներ ունի:



ՍՒՐՈՆ ԷՖ. ՏԻՕՆԵԱՆ

Իր նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն թաղային վարժարանին մէջ, ուր շատերու հետ ընկերակից ունեցած է ծանօթ խմբագիր եւ մեր սիրելի բանկամ Տիար Աբիկ Մուսպահեան, թող Արրա-

համ ամիրայ Մուպահեանեան ի, յաճախած է նաև Գուրգենեան վարժարանը. Գարոցէն ելնելէն վերջ 1892—4 Մուսուլ գաղցած է իրր պաշտօնեայ կայսերական Անճն. Գանձու Սթերանոցի՝ Գազազեան Յակոբ Փաշալի օրով. Յետոյ 1894ին կ'ստանձնէ Հէրէրէի Պոլսոյ վաճառատան գրագրութիւնը. Իսկ 1900ին նոյն վաճառատան պաշտօնէին մահէն յետոյ անոր կը յաջորդէ Աւագ պաշտօնեայ տիտղոսով, միևնրյն ատեն զաւաններու մէջ եղած շատ մը մասնագի. դերու աւագ պաշտօնեայ. Շնորհիւ իր արժա. իրին ստացած է զանազան պատուանշաններ, ինչպէս Միւթէ. մայրիկ ընթաց, Օսմանիյէ եւ Մէնիտիյէ չորրորդ աստիճան, պարսկ. Շիրի Խուրշիտ, Սերպիական Սէն Սափա, նաւատորմի արծաթ շքադրամ, եւն.


Ահա զեղեցիկ հոգի մը, արժանաւոր զաւակը մեր երկրին եւ ազգին.

Ս. Գ.

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՄԵՐ

Պատիւը կղզի մ'է սեպ եւ առանց ավտուրի. մարդ չկրնար այլեւս նորէն հոն մտնել, անգամ մը որ անկէ դուրս մնայ:

ՊՈՒԱՂՈՑ



ՏՐԻՊՈՒՍՈՅ ԱՌԻԻԾԻՆ ՄԱՀՐ

1. — Բաւր հովերուն, առիւմն աջ ու ձախ կը նեւեր եւ ան կը սրբուէր համբան. Աւսանակեց ձին խրոխտ, վրիբերախ. Հեծեալը սուլեց, կեցուց կարաւանն:

2. — ճօնեց նիգակը հուժկու Պէտէվին,
Առիւծը րնդոս շամփուրուած ինկաւ .
Թուլցուց սարածեց ոսքերն ետելին .
Շանթարձակ աչքեր մարեցան սակաւ :
3. — Մըռնչեց գազանն ու սարսըռացին
Թաւ արմաւենեաց ոսքեր դալար .
Կրկնեց Ովասխ արձագանգ լացին,
Հողմածըխացին ծառ գալար գալար :
4. — Աչքը սեւեռած աչքին մէջ դեղին,
Առաջ երկարեց ձեռքերն իր կմախփ .
Խեղդեց կոչն անոր վրձուկը ցեղին,
Չայն հեզնեց, դարձուց խայտառակ ու խաղբ :
5. — Ետեւէն խուճը խուճը ջատկներ անցան,
Ուղտերու ի նիւս ջայլականք պառաւ,
Դէմքին քննելու կարգաւ ծրուեցան,
Անէժք սեղացին, վրէժի ծարաւ :
6. — Եւ շուանհասակ հարսեր բազմանագ՝
Հոլանի կուրծով, փոքերնին պատած,
Գըլխընուն սուզի ցանեցին աւագ,
Լացին, ողբացին հայրենիք լրճուած :
7. — Իսկ պակտաւելի ալեւոր շէլսեր,
Ըսին «Մեզ ի՞նչ շահ, միքէ հնա՞ր է,
Տրիպօլիսէն այլեւս լուսալ խեր :
Ուր երբանք հոն են մզկիթ, մինարէ» :

8. — Կտրիններ՝ հասան, երդուրեցան «վալլան» .
Ռոսոսեց նրժոյգ, գոռաց հրբացան .
Պուռնուզն ուտերնուն՝ Արաքներ «Եալլան» .
Անապատին խոր աննէտ հեռացան :
9. — Ո՞վ խաւարակուռն քուտառ Ափրիկէ,
Հարագաս որդիքդ՝ խափշիկն ու Արաք,
Գերութեան լուծէն ո՞վ պիտի փրկէ .
Նեքինն ո՞ւժ, առի՞ւժ կամ խոսուում պարապ :
10. — Վա՛յ խեռ առիւծին, քանի լրզէր խոց,
Վէրքն ալ աւելի կը յորդէր արիւն .
Կ'այրէր, կը մըրկէր, աչքէն կ'ելլէր բոց,
Եւ սակաւ վրբան սիրէր մահուան քուն :
11. — Հեղ մըն ալ դարձաւ երկինքին անգայտ
Եւ աւազն ի վար փրոռեցաւ գետին .
Արեւը եղաւ աչքերէն անյայտ,
Սոսկուտով փրչեց իր շունչը յետին :
12. — Ո՞վ Սընուսիններ, վրէժնիդ առիք,
Երնէկ Ձեզի որ ազատ եւ անվախ,
Սահառային խոր պիտի քափառիք,
Սարսափ սրփուելով ձեր շուրջ այ ու ձայն :

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՆՍԵԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ՃՇՄԱՐԻՑ ՏԵՐԵՐԸ ԵՒ
ԱՇԽԱՐՀԱԿԱՆԵՐԸ

ՈՐՈ՞ՆՔ ԵՂԱՆԵ ԵՆ ԵՆ ԱՅՍ ԵՐԿՐԻՍ ՎՐԱՅ

«Պատմութիւնը՝ մեզ կը ներկայացնէ իբրև աշխարհակալ, Մեծն Աղէքսանդր (256-313), Յուլիոս Կեսար (44. Ն. Ք. զՔս) Ալարիք Մեծն Կարոլոս (742-814). եւ Նափոյէնն Պոնափարդ (1769-1821). եւ այլն Աստիք Թէ- եւ աշխարհակալութիւններ եւ արշաւանքներ ըրած են՝ ըստ իբրև ասուզատ շուտ իսկ անցան, անհետացան, զի չէին ճշմարիտ լուսաւորներ և յաղթականներ ինչպէս Տեոկրատիսը»



ԲՐՈՅ. Մ. ԱՂԱՃԱՆԵԱՆ

- 1.—Կրթութեան (1400—1468):
- 2.—Սթեֆանոս (1781—1848):
- 3.—ԲԱՍԹԻՍ (1822—1895):
- 4.—ՏԲԹ. ՌՌԻ (1853— . . .)
- 5.—ՌՕՊԷ ԲԻ ՖԻԻԼՏՕՆ (1765—1825),
- 6.—ՏՐՆԻ ԲԱՐԷՆ (1647—1710)
- 7.—ՖԻԼԷՏԻԿ ՍՕՎԱԺ (1785—1845)
- 8.—ԷՏԻՍՐՆ, ԹՈՎՄԱՍ ԱՂՎԱ,
- 9.—Ա. ՄՕՆԹՕՆ (1663—1705):
- 10.—ԳԻՕՏ ՇԱԲ (1763—1805 ,
- 11.—ԱՆԲԵՌ (1775—1836),
- 12.—ՏՐ ԼԷԲԷ ԱԲԲԱՆ (1712—1789),
- 13.—ՄԱՅԵՕ
- 14.—Վ ԱՂԱՆԹԷՆ ՉԱԻՅ (1745—1822 ,
- 15.—ՃԷՆՆԸՐ 1749—1823),
- 16.—ԲԱՌՄԱՆԹԷ (1737—1813),
- 17.—ՍԷՆ ՎԷՆՍԱՆ ՏՐ ԲՕԼ (1576—1660),
- 18.—ԿՐԱՉԱՄ ՊԷԼ (1675—1761).
- 19.—ՊԷՐԴ
- 20.—ԱՍՍՕՆՎԱԼ
- 21.—ՄԱՐԲՕՆԻ
- 22.—ՏՐ ԼԱՍԱԼ ԲԱՉԱՆԱՆ. ԺԱՆ. ՊԱԹԻՄԴ. (1651—1719)

Այս յաղթականներուն քառքը՝ տեւական, Կեանքը՝ անդ որր, եւ իազաղութեան ձիթենին՝ ք ձեռին ընդատաջ պաշտած են իբրև աշխարհ

մարդկու թիւնը գիտութեան ջահով հասցնելու երջանկութեան աւետեայ երկիրը: Վերջապէս այս մարդիկ, իւրաքանչիւրը իրենց հանճարին ձիւքերը նուիրեցին յօգո՛ւտ խաղաղաւետ բարօրութեան իրենց նմաններուն:

Ուրեւ, այս անձնուէր աշխատողաց բրանաթոր աշխատութեանց եւ անխոնջ աքնութեանց կը պարտինք հետեւեալներն.

1.—ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ գիւտն՝ որ փարատեց ժողովուրդի տգիտութեան մտայլ վարագոյրը: Ճշմարտութեան քօղերն պարզելով եւ ցրուելով արագօրէն մարդկութեան մահարիւր նախապաշարու մեերն, լուսաւորեց տնտեսկին միտքն, որպէս զի եթէ զուրկ էր աշխարհիս գիւրութիւններէն եւ բերկրութիւններէն՝ կարենար լիարուսն վայելել մտքի գոռանքն ու քաղցր զրօսանքները, այսպէս ստանալով բարոյական զօրութիւն ինքզինքը երջանիկ զգալու իր համեստ բնակարանին մէջ:

2.—ՎԱՅՐԱՇՄԹԻՆ, ԵՐԿԱԹՈՒՂԻՆ, որ՝ հազորդակցութեան ամէն միջոցներն պատրաստեց. քաղաքներ բարեզարդեց եւ հարստացուց, զիւղեբուն զարգացում, ուրախութիւն եւ հարստութիւն բերաւ, շատցնելով աղքատին հացը եւ հարուստին պարծանքը:

3.—ԿԱՏԱՂՈՒԹԵԱՆ, ԳԱՐՄԱՆ, Է ՄԻՔՐՈՊԿԵՐՈՒ վրայ տեսութիւններ իրեւ հաստատութիւնն աստից գոյութեան:

4.—ԿԵՂԾՄԱՇԿԻՆ ՇԻՃՈՒԿԸ, իրքեւ աղատաբար բազմաթիւ մանուկներու կեանքին:

5.—ՇՈԳԻՒՆ, ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԷջ:

6.—ՇՈԳԻՒՆ ԱՌԱՋԳԱԿԱՆ ՋՐՈՒԹԻՒՆԸ:

7.—ՆԱԽԵՐՈՒ ՊՏՈՒՏԱԿԸ (l'hélice)

7.—ԵԼԵՔՏՐԱԿՄԵՆՈՒԹԻՒՆ, ՉԱՅՆԱԳԻԸ:

9.—10.—ՀԵՌԱԳԻԸ.—ՀԵՌԱՉԱՅՆ:

12.—ԽՈՒԼ.—ՀԱՄԻՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ՝ ՆՇԱՆՆԵՐՈՒ ԼԵՁՈՒ:

13.—ՄԻԼԼՅԱԳ ՏԸ ՔԻՆԻՆԻ գործածութիւն ՁԵՐՄԻ ՂԷմ:

14.—ԿՈՅՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՅՅՈՒՆ ՏԱՌԵՐ:

15.—ԾԱՂԻԿԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԵԱՆ ԳԷՄ՝ ՊԱՏՈՒԱՍ:

16.—ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԵԿԱՅԻՆ յԵՐՐՈՊԱ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, որով Ֆրանսայի մէջ աղքատ դասակարգը կրցաւ ձեռք բերել օժան մտունդ մը:

17.—ԸՆԿԵՑԻԿ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ (Enfants trouvés) ԱՊԱՍԱՆԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՐԹԻՒՆԸ, որն որ ի Չոյայտ բերաւ բարեւորութեան զգացումը,

21.—ԱՆԹԵԼ ՀԵՌԱԳԻԸ:

22.—ԵՂԵԱՐՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՊՐՈՅԱՅ կամ յիկ ԵՂԵԱՐՔ (Frères des écoles chrétiennes). Ընկերութիւնը՝ որ աղայոց քրիստոնէական վար-

դասպետութիւնն եւ ուրիշ հասարակ ուսմունք կը սորվեցնէ եւայլն:

Ստոյգ չ'ենք գիտեր թէ արօրը հնարողը ո՛ւր ծնած էր եւ ո՛ւր մեռաւ. եւ սակայն ինքը աշխարհի երջանկութեանը համար աւելի գործ տեսած է քան թէ լոյրը զուցազունները եւ քաջամարտիկ յաղթականները:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ. — ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԾՆՈՂԱՅ ՀԱՄԱՐ ԿԱՆԻՄՐ ԳԻՏՅԵԼԻՔ

Տան կառավարութեան մէջ մեծ եւ սիրամաշէկցնող դժուարութիւնը ան է որ՝ ծնողքները կամ բարոյական համարձակութիւն չունենալնուն, կամ ինքիւնդին զսպելու կարող չ'ըլլալնուն, եւ կամ ուրիշ ալլանդակ բանի մը համար բանակաւնութիւնը եւ խղճմանաւք մէկդի ձգելով չեն կատարելք այն լսները՝ որ գիտեն իրենք թէ օրինաւոր են եւ հարկաւոր:

Բարեկարգ տուն մը պարտի պատուական գորատուն մը ըլլալ տանը մէջի բոլոր անդամներուն, հաւասարապէս թէ՛ ծնողացը եւ թէ՛ զաւկրներուն:

Ծնողք շատ անգամ աւելի ժամանակ՝ դրամ՝

եւ ոյժ կը վասնեն զաւկրները կործանելու, քան որչափ հարկաւոր է զանոնք փրկելու:

Ծնողքներու առաջին ամենահարկաւոր գործն է զաւկրներուն կամաւոր հնազանդութիւն սորվեցունել:

Մինակ զաւկրներնուն աղաչանքին համար անոնց ուղածը ամէն ատեն ընելու չենք, ինչու որ սղայք շուտով կը սորվին այն կերպ աղաչական խօսքերով ամէն իրենց ուղածը ձեռք ձգել:

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Մէկը այնչափ չի սիրեր զաղանիքները՝ որչափ ան որ միտք չ'ունի զանոնք պահելու: Այսպիսի մտղիկ զաղանիք լսելու ծարաւի են, ինչպէս որ շուայները ծարաւի են սոսակ հաւաքելու զայն ցրուելու համար:

ԱՊԱՌՆԻ ԱՏՆԻ ՎՐԱՅ

Ո՞վ էր ներկայ վիճակին վրայ գոհ է, մէկն ալ չէ: Ամէնքս ալ ի ներքուստ սաստիկ փափաք մը ունինք ապառնիին վրայ: Մանկութեան ատենն իս, պատանեկութեան կ'սպասենք. Պատանեկութեան ատենն իս երիտասարդութեան, երիտասարդութեան ատենն իս ծերութեան. եւ վերջապէս ծերութիւնը ի՞նչ բանի վրայ պիտի դառնայ նայի՞ բայց եթէ մեր աշխարհէն անդին հանդերձեալ աշխարհին վրայ:

ՏԱՆ ՄԷՋ ԳՈՐԾՍԵՆՎՈՒ ԵՐԵՎ ԿՍՆՈՆ

1. Ամէն բան իր յատուկ ատենին բրէ:
2. Ամէն բան իր յատուկ պաշտօնին գործածէ:
3. Ամէն բան իր յատուկ տեղը դիր:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆԸ ԱՐԱՅ

Աստուծո՛վ վախցիր իր գորութեանը համար, իրեն ապաւինէ իր բարութեանը համար, զինքը փառաբանէ իր մեծութեանը համար, իրեն հաւատա իր ազգած վստահութեան համար, եւ զինքը պաշտէ իր սրբութեանը համար: *

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Եթէ հպարտութիւնը քու հոգիէդ եւ քու հոգիդ հպարտութենէ հեռի չը պահես, Աստուծո՛՛ծ քու հոգիդ երկինքէն հեռու պիտի պահէ:

Ան որ ուրիշներու արժանիքը չը տեսնել կ'ուզէ, ինքն շատ դժուարութիւն կ'ը կրէ իւր արժանիքն մեզ ցուցնելու մասին:

Աղջկանց դաստիարակութիւն հոգ չը տանիր, բուն իսկ իւր ընտանեաց ամօթ պատրաստել է:

Բարքերն այնքա՛ն ապականած են որ, զգաստութիւն բուն իսկ գրեթէ հինգսո՛ւ եւ ծագրելի կը համարուի:

Գրքերը հոգւոյն համար են այն ինչ որ սնունդը մարմնոյն համար:

Կրօնքի մտացումը կ'առաջնորդէ զմարդ իւր բոլոր պարտականութեանց մտացումին:

Խօսեցէք, գրեցէք, գործեցէք, խորհեցէք այնպէս իբր թէ ունենայիք հազար վկայներ:

Գիտութիւնը, իբրեւ հաւատարիմ եւ սրելիժաց առաջնորդ, զմեզ կ'առաջնորդէ երկրէ երկիր, թագաւորութենէ թագաւորութիւն: Ան ի յոյս կը բերէ մեզ օրէնքները, բարքերը, կրօնքը, կառավարութիւնը:

Ուր որ մոլութիւնը կը ա՛րէ, չը կարծենք որ մարքի հանգարտութիւնը եւ բերկրութիւնը կրնան բնակիլ հոն:

Ամէն ինչ որ կը պահանջեն օրէնքները, կը յանձնարարեն բարքերը, եւ զոր խղճմտանքը կը ներշնչէ, ամփոփեալ կը գտնուի այս ամենամանօթ առածին մէջ. «Մի՛ ըներ երբէք ուրիշին ինչ որ չը պիտի ուզէիր քր մէկը քեզի բնէ »

Ան որ առտուանց ուշ կ'ըլլայ, բոլոր օրը պիտի արտայայ, եւ հազութէ մինչեւ գիշեր իր գործին պիտի հասնի:

Գաշտին կանաչը, լերանը ծառը կ'օրհնէ զկասաած, փիղը արեւին ծագելուն զինքը կ'ողջունէ, սողունը անոր ճառագայթին մէջ կը շարժի, թռչաւնը տերեւներուն մէջ զինքը կ'երգէ, որսաւմը երկնից

մէջ զինքը կը քարոզէ, Ովկիանոսը անոր մեծութիւնը կը յայտնէ. միայն յիմար մարդն է որ կ'ըսէ «Աստուած չի կայ»:

ՄԵՂԱՆՉՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ան՝ որ հոս մեղանչական կեանք վարելով՝ աակեց ետքը երջանկութեան հասնելու կը յուսայ, կը նմանի ան մարդուն՝ որ որոմն կը ցանէ, ու իր ամբարները ցորենով կամ՝ դարձով լեցունել կը խորհի՞

Մեծամեծ հարստութիւններ մի՛ փնտրուեք, հապա անանկը՝ որ կրնաս արդարութեամբ ստանալ, ուրախութեամբ ցրուել, եւ գոհ Պրտով ձգել երթալ:

Մարդկային ազգը կը բարեկարգուէր, եթէ մտնկանց դաստիարակութիւնը բարեկարգուներ:

Մանկիկը ծնանելէն ետքը բուն մայրը զայն սնուցանելու է՝ դիեցնելով իւր ստեամբը որ իմաստուն եւ ինամածու սնութեան այս նպատակաւ պարտաւորած գեղեցիկ աղբիւրն է: Եւ ի՞նչ աւելի մեծ զուարճութիւն կրնայ ունենալ կին մը աշխարհիս վրայ քան զայն զոր կ'ունենայ անձամբ դիեցունելով իւր մանուկը, որուն քաղթնաս լեզուն եւ սիրուն թոթովանքը, իւր բառերն տրտասանելու դրժուարութիւնը, անուշակ եւ կաթոգիւն ժպտոր, տանը տուած զուարթութիւնը բոլոր աշխարհի զաւեշտներէն դերազանց են:

Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

1. Շարժուն փեղկով պատուհան
Երկու լուսոյ մէջ կեցած
Բաց է ու գոց ամէն վայրկեան:
2. Ինքն ինքներէն ինձ եկեր,
Ուզեմ չ'ուզեմ եղեր բնկեր,
Զորս կողմս առեր կը պարտի,
Յոգնիլ չ'ունի որ դադարի,
Առջեւս բլլայ՝ չեմ հասնիր,
Ետեւինէս չեմ պրծիր:
3. Մանրիկ մանրիկ կը քայլէ՝
Գիշեր ցորեկ փոյթը չ'է.
Թէեւ նոյն սեղ միշտ ման գայ
Բայց իւր գլուխն ոչ դառնայ.
Ոչ քայլէն կը յոգնի
Ոչ կերակրոյդ պէտք ունի,
Բայց ինքն է որ քեզ կ'ըսէ,
Ել, կեր, քնացիր, աշխատէ:

4. Միշտ անհանդարտ է, կը վազէ,
Թէպէտ մէկ ոտք մ'ալ չ'ունի,
Պատճառ չ'կայ, կ'աղաղակէ,
Թէպէտ բերան ալ չունի.
Ամենուն հետն ալ կը կըռուի,
Թէ մտրդ չ'ըլլայ, ինքնիրեն,
Ոչ սահման ոչ ալ լուծ ունի,
Ո՞վ է, ի՞նչ կ'ուզէ մեղմէն:

5. Տնկէ զիս՝
Գարնան գուշակ ծառ կ'ըլլամ.
Դարձուր զիս՝
Աբտիզ պահպան քեզ կ'ըլլամ:

6. Կենդանիէ մը կուգամ,
Բայց կեանք չ'ունիմ,
Ուր որ ուզեմ նէ կ'ըլլամ,
Հոգի չունիմ,
Ում հետ ուզեմ կը խօսիմ,
Բայց ձայն չ'ունիմ.
Ամեն հարցման պատասխանեմ,
Բայց մոզ ալ չեմ.
Ուրեմն ի՞նչ եմ:

7. Զարմանալի պատկեր մ'ունիմ,
Թէ աջ կողմէն որ նայիմ՝
Ինձ կ'երեւի մէկ տեսակ.
Զախէն նայիմ՝ ուրիշ տեսակ.

Այս ի՞նչ զարմանք,
Զախէն տեսնեմ է թագաւոր,
Աջէն նայիս՝ ա՛լ փառաւոր,
Աստուծոյ դէմք է վըսեմ,
Ի՞նչ է աս ըսե՞մ:

8. Ինքը խօսիչ չը զիտեր,
Խոսիլ կ'ուտայ զուրիշներ.
Ինքը քարի պէս ցուրտ է,
Բայց ի՞նչ սրտեր կը վառէ.
Գանձ մըն է՝ որ շատ անգամ,
Կը ծախեն մէկ դահեկան:

9. Գլուխն ու վեղ երբ մէկտեղ են՝
Այբուբէնիդ տառ մըն են.
Բայց թէ գլուխն ալ գու կըտրես՝
Դարձեալ ինք ողջ է, գիտե՞ս.
Վախցիւր իրմէ երբ գլուխ ունի,
Կ'ըսեն թէ նա «գլուխ չունի».
Բայց զողացիւր անգլուխ մարմնէն,
Ձը ձրգեր զէնքն իր ձեռքն.
Թէ չ'ես հաւատար ինձ զարմացած՝
Հարցուր քու խեղճ Հայրենեաց:

10. Ինձմէ սնուչ ի՞նչ լան կայ
Երբ ես պոչ ունիմ.
Ինձմէ լեզի ի՞նչ լան կայ

Երբ ես պոչ չ'ունիմ
Ի՞նչ աւելի պարարտ կայ
Երբ պոչ գլուխ չ'ունիմ:

11. Դեռ ես չը ծընած
Անունս դրեր են,
Ծընած չը ծընած
Անունս կը փոխեն.

Վերոգրեալ հանելուկներուն՝ իբր պատասխան լուծումն՝ հետեւեալ բառերն կարելի է յարմարցնել բոս պատշաճի:

Գրիչ, ժամացոյց, սոււերդ (սուխ), աչք, ծով, նուռ. մարդ, գիրք, դանակ, մեղր, սեղ, եղ:

30 Յոսոս 1923

Խակիսար

Ամփոփեց
ԲԲՌՓ. ՄԻՀՐԱՆ ԱՂԱՃԱՆԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

Ո՛վ իմ պատանութեանս արեւր, որ պահ մը բոլոր յիմար երազներս, հորիզոնին վրայ սահող փախսական ամպերուն պէս, գորովանովդ ոսկե-գոծեցիր:

Գ. ԶՕՀՐԱՊ

Պ Ա Ն Դ ՈՒ Խ Տ

Հեռաւոր Հոգեհաստի՛ս...

Եղո՛ւկ, սիրտս ժամանակէ մը ի վեր ալեկոծ է, յայգար կը փոթորկին ներսս և յորդ արցունքներ կ'աղբեն աչքերս, ծայնս չունի այն վճիտ, զարնան ել գեր հիւտող պարմանիի շեշտը, լալկան նուագ մըն է այն եւ ներքին տագնապս կը մատնէ: Ինչո՞ւ:

Անասելի տխրութիւնը կը կրծէ հոգիս եւ ականջներս սրած կ'ուզեմ լսել միայն այն անուշ, գրաւիչ աղաղակը որ ամբողջ էութիւնս պիտի համակէր բաղցրութիւնը երով ու հրապոյրներով, որ պիտի վանէր ինձմէ օրուան հիզերն ու տաղտուկները ու երեւակայութեանս թոխից պիտի տար, ներշնչելով միեւնոյն ատեն ինձ կորով:

Ինչո՞ւ այս անանուն զուր:

Ո՛չ, անանուն չէ այս, անունն է ԿԱՐՈՏ:

Որովհետեւ բացակայ է այն, բացակայ իր բունիկէն, իր սիրելիներէն, այն օրէն ի վեր երբ հարկ եղաւ ձմարու ղնել զանի փոքրիկ Սափոյացի լաճին պլ.՝ որ իր գեղէն հեռացաւ երբեմն մարկան համբոյրներով ու արցունքներով:

Ո՛հ, սէրը հոգիին սնունդն է, զգուանք եւ համբոյր կ'ուզէ ան եւ պանդուխտը չճաշակեր սիրոյ կենսատու հոյզը ու կը տառապի:

Պանդուխտ, զգոյուն էակին համազ ամպրտ
 րեր անունք սրունք կը սահին օտարութեան մէջ.
 յուզումով կը յիշէ իր կեանքը իրեններուն մօտ.
 ամենէն անշշան կարծուած իրեր իր միտքին
 մէջ կը մեծնան եւ իրեն զուարթութիւն կը պար-
 գեւեն, երբ կը յիշէ իր հայրենի օթեւանը, իր
 սննեակը՝ իրեններուն սիրով անուշաբոյր, իր
 մաքուր անկողնիսը մայրիկին փափուկ ձեռքե-
 րով յարարուած, երեկոները ընտանեկան սե-
 ղանը՝ համեղ կերակուր երով լեցուն. երբ զօրեր
 ամէնքն ալ շիմայ ոչ մէկ բան հրատար ռնի,
 երբ գեղեցիկ եղանակը ծաղիկներով զարդարէ
 բնութիւնը եւ թռչուններ գարնան փտուրը կ'եր-
 գեն ինք ամայութիւն կը տեսնէ շուրջը. ու կը
 խոկայ մինակ, թէեւ մարդերու ամբօխէ մը պա-
 շարո սծ բլլի ու բանտուած է հոգին թէեւ
 բնակած ըլլայ շքեղ պալատի մէջ, ու կոչէ,
 խորտակեցէք հոգիիս կսպերը. թողէք որ թռչիմ
 այն փերուն վրայ՝ ուր իմիններս կը շնչեն,
 թողէք որ սէրս յագորդ ստանայ ծնողական գիրկը.
 Բ՛լ որ երանք այն օրուան, երբ սիրով տառա-
 պող հոգիները ծաղիկներու փունջի մը պէս իրա-
 րու կը միանան. այդպիսի օրուան մը մէկ վայր-
 կեանք անսահման ժամանակներ կ'արժէ.


Ս. Գ.

ՔՈՍՈՏՈՒԹԻՒՆ

Փոխանցիկ մերթախտ մըն է քոստութիւնը որ
 յատուկ մակարոյճի մը՝ ակար (acarus scabiei)
 կոչուած մանր անասնիկի մը ազդեցութեամբ երե-
 ւան կուգայ:

ՔՈՍՈՒ ՊԱՏՄԱ-

ԿԱՆԸ. — Հին գա-
 բու բժիշկները քոսը
 ճանչցած էին, սա-
 կայն յատակ կերպով
 բացատրած չէին: Հի-
 փոքրատը անոր մա-
 սին տարտամ յիշա-
 տակութիւն մը միայն
 ըրած է: Արիտոտէլը
 իր «Սնանոց Պատ-
 մութիւնը» գիրքին
 մէջ ոչ միայն քոսի
 գոյութիւնը այլ եւ
 անոր մակարոյճ ա-
 նասնիկի մը միջոցաւ յառաջ գալը գուշակած է:
 Կալիէնը երկրորդ դարուն (Ք.Վ.) քոսի մասին շատ
 անորոշ բացատրութիւն մը տուած է:



ՏՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐԵԱՆ

Արաբ բժիշկներով քրոսի պատմութեան մէջ նոր թուական մը սկսած է: Այլ Ապպաս քոսը՝ միւս հիւանդութիւններէն զանազանելով անոր գոյութիւնը յատկ կերպով նկարագրած է: Ավիզէն քոսի փոխանցիկ հիւանդութիւն մը եւ անոր նախընտրած վայրը միջնամասները ըլլալը ցուցադրած է: 1687ին Սալայցի բժիշկ Պոսոմոն եւս ակարբ գտած եւ մանրագէտի մը միջոցաւ պատկերն ալ քաշած է, սակայն սխալ մը գործած է, պնդելով թէ՛ ակարբ մորթին վրայ յառաջ եկած փամփշտիկներուն մէջ կը գտնուի: 1734ին բժ. Լիննէ թէեւ հաստատած եւ պաշտպանած է Պոսոմոնի կարծիքը, սակայն ան ալ աւելի մեծ սխալ մը գործած է կարծելով թէ՛ ակարբ եւ պանիրի որդը կենդանական միւսնոյն սեռի տարբեր տեսակներն են:

1754ին Լիննէյին աշակերտը Նիյանտըր ցուցադրած եւ հաստատած է թէ՛ ակարբ ակօսներու (sillons) մէջ փնտաւելու է ոչ թէ՛ մորթի փամփշտիկներուն մէջ:

1834ին վերջնականապէս, բժշկական ուսանող մը, Ֆրանսուա Բենուշէի, Փրոֆ. Ալպէրի օգնականը՝ ակարբ ցուցադրած է իր ուսուցչին որ կը խոստովանէր թէ՛ երբեք տեսած չէ զայն, եւ միւսնոյն ժամանակ սովորեցուցած է ակարբ ինչպէս փնտաւել եւ գտնելը: Սակայն 1834ին ակարբ վերագտնուած է: 1851ին Լանքթէն արու ակարբ էգէն զանազանած է:

Քաղցիկներու ցեղէն, արարիաներու սեռէն եւ մասերէն (sarcoptide) տեսակէն անանիկ մըն է: Այլ ըսով հազիւ տեսանելի եւ հաւկթածեւ է: Արու եւ էգ ակարբեր չկան. էգը արուէն աւելի խոշոր է: Ակարբներուն շարժանքը փոքր կըր եւ նուրբ մտղեքով զորդարուած չեն, կանակին կարծր եւ փուշեքով լեցուն չեն: Ունին չորս զոյգ թաթեր, երկու զոյգ շաւաղամասին վրայ ծծոցներով (ambulacra à ventouse) զինուած, երկու զոյգ յետնամասին վրայ նորահասեր մազերով պծնուած են: Այս վերջիններէն էգ ակարբն քով ծծոցներ չունին, իսկ արուին թաթերէն միայն երբորդը նրբահաս մազերով զարդարուած է, իսկ չորրորդը առաջամասի թաթերուն նման ծծոցներ ունի, որոնք զուգաւորութեան համար արուին կ'օգնեն: Առաջամասի թաթերուն ծծոցները թէ՛ արուին եւ թէ՛ էգին տեղափոխութեան կը ծառայեն: Արուները կը զուգաւորուին էգերուն հետ իրենց յատուկ անանիգամբ միջոցաւ: Միաւորութիւնը տեղի կ'ունենայ նրբուշիկներու մէջ: Արուն որ մորթին տակը կ'ապրի, կ'երթայ էգը: փնտաւելու եւ զուգաւորութիւնը կը զգատարէ ակօսներու եւ վերնամաշկի տակի նրբուշիկներուն ծայրը՝ ուր էգերը կ'ապրին: Էգ ակարբ եւ արաքսնիւր անգամ քսանական հաւկթ կ'ածէ: Հաւկթիները ձուարկութենէ ճիշդ վեց օր վերջը

կը բացւէին, նախ թրթուրներ յառաջ կուզան, յետոյ ասոնք կը փոխուին էնիմֆայի (nymphes) որոնք զեռ սեռ չունին, յետոյ ասոնցսէ արու եւ էգ չափահասներ առաջ կուզան, որոնք կատարելութեան հասած ակարներ են, շաշուուած է որ մէկ զՅՅ արու եւ էգ ակարը երեք մամուան միջոցին 1,500,000 սերունդ կրնայ յառաջ բերել: Այս քաղմածնութիւնը գաղափար մը կրնայ տալ թէ քորը որքան արագ կրնայ փոխանցուիլ եւ տարածուիլ: Բուն հիւանդութիւնը յառաջ բերողները էգ ակարներն են, արուները սակաւութիւն են եւ ընդհանրապէս մորթին տակը կ'ապրին, տկոսներ չեն քանար. իսկ էգերը բազմութիւն են եւ մորթին մէջ տկոսներ եւ նրբուղիներ բանալով այլակերպ բորբոքային էլուկներ (eruptions inflammatoires) յառաջ կը բերեն:

ԲՈՍՈՏՈՒԹԵԱՆ ԱՆՏԱՇՐՁԱՆՆԵՐԸ. — Փրոֆ-

Պագէշը քոստուածեան զարգաշրջանը երեք մասեր կը բաժնէ, 1. Խիստամի շրջան. 2. Հաստասման շրջան. 3. Բուժման շրջան:

1. Խիստամի շրջանը, այն ժամանակամիջոցն է որ կը տեսէ հիւանդութեան փոխանցումէն մինչեւ քոստուածեան բնորոշ նախանշաններուն երեւանդալը: Անոր տեւողութիւնը երկուքէն մինչեւ ութ օր եւ քաջառաքար 15 օր, ամիս մը եւ վեց շաբաթ է: (Սա շրջանին էգ մակարոյթը մորթին ներքեա-

թաղանթին մէջ մտնելով, ջիզերուն ծայրերը կը զբգաւ եւ անձի համեմատ աւելի կամ նուազ քերոււտուք մը յառաջ կը բերէ: Այս քերոււտուքը գիշեր ատեն նամանաւանդ անկողին մտնելէն վերջը կ'սկսի:

2. Հաստամասի շրջան այս շրջանի ախտանշանն էն ա. Ակօսը, թ Աստտիկ քերոււտուքը, եւ գ. Խորբոքաւոր էլուկները:

ա. Ակօսը (sillon) էգ մակարոյթին փորած ուղին է, սեւ կամ մոխրագոյն շ—հ միլիմէթր երկայնութեամբ, բեկբեկուած, ծամածուռ, օձապոյտ եւ երբեմն ալ ուղիղ դիժ մըն է, ընդհանրապէս կիսալուսնի եւ կամ Տի ձեւ ունի: Ակօսը քոստուածեան բնորոշ եւ իսկական ախտանշանն է, այսուհանդերձ մաքուր, մորթերնին լուսնամուտած անձեր երբեմն այս տկոսները չունին: Ակօսները երկու ծայրեր ունին, մէկ ծայրերը աւելի լայն են եւ մակ սրոյծներուն մուտքի վայրերն են: Այս ցցուած ծայրերը ասեղի մը միջոցաւ ծակելով ակարները քորուք քաշել հանել կարելի է: Ակօսները ընդհանրապէս մասններուն մէջտեղը, զատակին, առնանդամին եւ ստինքներուն վրայ, ոտքերուն վրայ (աղցց քով), արմուկին, արունգներուն վրայ կը գրուեսին, մինչդեռ գէմքը եւ կռնակը զերծ կը մնան:

բ. Բերուքսմիլը: Արդէն առաջին շրջանին երեւցող քերոււտուքը այժմ կը քոստակաւայ եւ մարմ-

նին ամէն կեղմը կը տարածուի: Տաքութիւնը մարմնամբաղը յոգնութիւնը եւ ալքոլը քերտըտուքը կը սաստկացնեն: Անթակահ շատ կը սառապի այս քերտըտուքէն, նամանաւանդէ գիշերատան անկողին մտնելէն յետոյ:

գ. Բորքոխտը կլուկները: Աստիկ քերտըտուքէն, ակարներու մորժի ներքնաթաղամ թին մէջ բրտծ շարժումներէն, եւ կամ անոնց վարակիչ «այնէն» (venin) յառաջ կուգան զանազան եւ ալլակերպ էլուկներ, ուռիկներ (papules), բշտիկներ (versicules) եւ խաղաւարներ (pustules): Ասոնք ակօսներուն գտնուած տեղը կը տեսնուին:

3. Բուժման շրջան: Միջատապան դեղերուց զարմնուած քոստներուն վրայ յառաջ եկող էրեւոյթները բուժման շրջանը կը կսգան: Մակաբոյժները իրենց գտնուած զանազան վերերուն մէջ կը մեռնին ու կ'ոչնչանան, բորբքաւոր էլուկները կ'ապրանան, ակօսներ կ'աներեւութան եւ անոնց գտնուած վայրի վերամաշկերը կը թափին, քերտըտուքը օրէ օր շատ արագ կերպով կ'անհետանայ: **ՔՈՍՏՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ.** — Վիսանցման երկու ձեւ կայ ուղղակի եւ անուղղակի:

1. Աղղակի վարակում եւ անուղղակի յոխակցում. — Առողջ անձի մը քոստի մը մարմնոյն ճեռուղղակի շփում ունենալէն յառաջ կուգայ: Այս շփումը որքան որ երկարի, փոխանցումը աւելի յա-

ջող կերպով կ'երագործուի: Առողջ անձի մը քոստութեան ենթակայ մեկու մը ճագուտները, ճերմակեղէնը, ձեւոնցները, անձեւոցները, անկողնի սաւանները, բաղնիքի զննջակները եւ այլն գործածելէն յառաջ կուգայ: Հասարակաց վայրերը նոյնպէս անուղղակի կրնան սատարել:

Վերին աստիճան ջերմ յառաջ բերող մի քանի հիւանդութեանց զօրօրինակ ժանտաանգի եւ թորատապի (Fièvre typhoïde, pneumonie) գոյութեան ատեն քոսը կ'աներեւութանայ, եւ անոնց բուժումէն յետոյ կրկին երեւան կուգայ:

ՔՈՍՒ ԱՆՏԱՃԱՆՍՈՒՄԸ. — Ակարի եւ ակօսներու գոյութիւնը քոսի ինքնապատուկ ակտաճանտման երկու էական արտանշերն են, կրկջը ճանտման երկու էական արտանշերն են, կրկջը կրտէ թէ ասեղով մը սկօսի ցցուած ծայրը ծակկը՝ ակար մը կարելի է իր բնակավայրէն դուրս բաշէլ հանել, այսպէս դուրս հանուած ակրերի հասիկի նման փոքրիկ ճերմակ մակարոյծը եղունդին վրայ թէ որ դնենք, ատեն մը անշարժ կը մնայ, իսկ յետոյ կ'սկսի փախչել:

ՔՈՍՒ ԱՆՏԱՃԱՆՍՈՒԹԻՒՄԸ. — (Pronostic de la gâle). — Ձի զարմնուած քոստութիւնը օրէ օր կը սաստկանայ եւ երբոր հիննայ զարմանք դժուարին է եւ երկար ժամանակի կը կարօտի: Քոսը չի զարմանուելով անքնութիւնը, քերտըտուքը, ջլազբգութիւնը եւ ուրիշ կրճու-

տուբիւճններ այնքան կը նիհարցնեն ենթական որ, մինչեւ անգամ՝ ակտափէտուբիւն (cachexie) եւ մահ կրնան պատճառել:

ԲՈՍՈՏՈՒԹԵԱՆ ԳԱՐԿՐԱՆՈՒՄԸ. — Բոսի դարմանումը իր պատմութեան տարբեր շրջաններուն շատ մը բարեփոխութիւններէ անցնելէ վերջ, այժմ շարակի կողմէ հիմնուած քոստութեան արդի դարմանումը էապէս կը բաղկանայ լրգանքէ, մորթի վերնամաշկը կակուզցնող օճառով եւ ազդու միջատասպան օճանակով մը շփումէ. **հիոլմ (frotte)** յորջորջուած այս դարմանումը հետեւեալ կերպով կ'իրագործուի:

1. Բոսն վայրկեանի չափ մարմնոյն բոլոր մասերուն շփումը, խողանակի մը միջոցաւ՝ տաք ջուրով եւ արաբական օճառով (savon noir):

2. Կէս ժամուան լրգանք մը ուր շփումը պէտք է շարունակել:

3. Կարմնոյն ամէն մէկ կողմը, նամանաւանդ մոկարոյժին նախընտրած մասերը զօրաւոր կերպով քսել Տօքթ. Հայտիի կողմէ բարեփոխեալ բժշատար հէլմէրիկով որ կը բաղկանայ **Rp. Carbonate de potasse 25 gr. Souffre 50 gr. Axonge 300 gr.**

Գիշեր ատեն օճանակը պէտք է մնայ մարմնոյն վրայ մինչեւ հետեւեալ առտուն: —

4. Տաք բաղնիքի մէջ պէտք է լուացուի մարմնին վրայ գտնուած իւրը մաքրելու համար, իսկ թէ որ մարմինը դեղին ազդեցութեամբ բորբոքած է, պէտք է նշայի պսնեօ ընել, յետոյ նշայի փոշիով եւ կամ ուրիշ հոտաւէտ փոշիներով մորթը ծեփել:

Ուրիշ կարեւոր գիտելիքներ այ կան զորս պիտի յանձնարարէ Ձեզ Ձեր բժիշկը:

20 Յունիս 1923 Տոքթ. Յարութիւն Ղազարեան
Կոստնա, Կերպիս
Իրանթ.— Ազնիւ բժշկին սոյն շահեկան ուսումնասիրութիւնը ցաւ ի սիրտ ստիպուեցանք համառօտել տեղւոյ անձկութեան պատճառաւ:

Շ Ո Վ . Մ Ո Վ .

Կը կարծուի թէ Մարթօնին է անբել հեռագրին գնարիչը, Ասուած Տիեզերքը ստեղծած օրը իսկ աւարտուած անբել հեռագիրը:

Աղօթքը առաջին անբել հեռագիրն է Ասուծոյ եւ մարդոց միջեւ:

Անբել հեռագիր է նաեւ սէրը որ երկու սիրտերը հազորդակցութեան մէջ կը դնէ:

Յ. ԱԼՓԻԱՐ

ԱՂԱՒԻՔՂԵԱԼ ԱՌԱՅՆԵՐ

Ծանօթ.— Մ. Հունկի տոյն եզական ԱՂԱ-
ԻԱՂԵԱԼ ԱՌԱՅՆԵՐ էն հրատարակուած են երկու
հատ մեր 1922 ի ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՑՈՅՑՅՐՆ, երկու
հատ նոյն տարւոյ ՔԷՈՂԻԿԻ ՏԱՐԵՑՈՅՑՅՐՆ եւ
երեք հատ եւս մեր 1922 ի ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՑՈՅՑՅՐՆ
մէջ. ի լոյս կ'ընծայինք նաեւ հետեւեալներն, որ
ապահովաբար մեծ հասոյքով պիտի կարգացունին:

Որպէս այսօր լինէր՝ կը յիշեմ սակաւին
Այն խօլ ֆենուքիւնք, զոր ինձ անցնել տուին
Ծաղրածու ֆենիչներ՝ երբ այն ինչ պատահի՝
Ամալերջի օր մը կոչուեցայ յ'ասեհի.
— Պարո՛ն, հարցուցին ինձ, ի՞նչպէս պէտք է գրեմ
Մեր ՊԱՏԵՐԱԶՄ բարբ Ժամաներէն, բարբերէն՝
Նաեւ քե՛տ մեզի լեռ բարձր, հսկայ
Համայն Ռուսիոյ մէջ համահուն գե՛տ այ կայ.
Սեւ սախակին վրայ գրչիս սակ կը փայլէր
Սա առածք միայն. «Կէ՛ն, ՀԱՐՊ ԵՒ ՌԻՐԱԼ ԼԵՆԻ»:

Անպարտ մը տեսարանին հիշող առաջ
Մեծկակ սեղան մը գե՛տեղեց դէպի աջ.
Ապա ըրաւ բեմակողմին հրաման
Որ իրեն սան կարով լեցուն ծծաման.

Եւ խօսք ուղղեց ներկաներուն յաւկաց.
Գո՛ւք ալ, ըսաւ, ինձ պէ՛տ զի՛տք անկասկած
Քէ՛ օձեր կարին հոտէն կ'ախորժին.
Պիտի տեսնէ՛ք այսօր խաղի լաւ բաժին.
Ծածակիս մէջ անեղ օձ մըն է բախուն
Եւ կծկուած՝ կը փաշէ կոր անուշ բուն.
Կ'ուզեմ զանի հրաւիրել այս ծակէն.
Հրաւալիք պիտի գործեմ ապաքէն.
Սոսոյ է քէ ծծակին փողն է վիճ.
Բայց ի՛նչ փոյր ձե՛զ. լոկ դի՛տեցէ՛ք անքիթ:
Չայս քսելով՝ ծծամանը ձե՛տք առաւ.
«Ա՛լ անցուցիք, սիրելի՛դ իմ, եւ ծարաւ.
Գո՛ւրս չե՛ս ելներ. բարեկամիդ չե՛ս մօտը:»
Այսպէս կարգ մը խօսքեր ըրաւ կեղծ, պատիր.
Հմա՛յք, հրա՛ւք, սեպէ՛ ինչ որ կը սեպես՝
Նրբին բան մը դուրս ստեղծաւ ծուխի պէս.
Բայց այս ծուխը կ'ստաւաւանար, ձեւ կ'առնէր,
Վիճապ կ'ըլլար՝ ցցած սուր սուր անդամեր.
Հանդիսականք սահմակեցան սարսափած.
Անպարտն ալ՝ վիճապին դէմ գրկարաց.
«Առած մը կայ, յարեց, շատ նին տեսնէ.
ԱՆՈՒՇ ԼԵԶՈՒՆ ԹԶ ԾԾԱԿԷՆ ԿՐ ՀԱՆԷ:»

Մ. ՀՈՒՆԿԻ

Բ Ա Ռ Ե Ղ Ծ ՈՒ Ա Ծ

Հրնգ սառերով գոյական մ'եմ,
Շաս քիչ անգամ ունիմ համեմ.
Եթէ ուզես, օն' զիս օրջէ',
Այդ ըսածդ ասարդիւն չէ' .
Գլխի սառս գեթի՞մ ինկար,
Կարող իմաստ զսփ հարկար .
Ե՞րկրորդ սառս է որ զնաց ման'
Վերջին կամիկ է'ս եմ քարզման .
Երկո՞ւերն ալ են բազակայ,
Նախդիր մը լոկ ա'լ իմ մէջ կայ:

ՏԻԿ. ՖԻՄԻ ՄՍՐՂԵԱՆ

Սոյն բառեղծուածը մինչև ներկայ տարւոյ
Մարտ 30 ին առաջին անգամ լուծողը կ'ստանայ
գրական նուէր մը Գարամաճեան գրատունէն:

Անցեալ տարւոյ անմասն Մ. Պէշիկթաշյեանի
Հանելուկին լուծումն էր ԱՍԵՂ, զոր առաջին
անգամ գտաւ ՕՐ. ԱՆԱՅԻՍ Ա. ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ
որ ստացաւ նուէր Ա. Իսահակեանցի ՀԱՅՐԵՆԻ
ԱՂԲԻՒՐԻՅ. Նոյնը լուծեցին նաև Տիկին Շամ-
անճեան (Իսակիւտար) ՕՐ. Սրաքսի ԱՇՃԵԱՆ
(Բերա), Պ. Ս. Պէրպէրեան (Իսակիւտար), ՕՐ. Ալիս
Սէմէրճեան (Մաքրիգիւղ), ՕՐ. Գրիտսինէ ԱՇՃԵԱՆ
(Իսակիւտար), Պ. Պետրոս Ասլանկիւլեան (Առնա-
ւուտ Գիւղ) Պ. Յակոբ Չիլինկիբեան (Սիլիգրե) :

ԹՈՒՐԲԱ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

Թուրքոյ Ազգ. Մեծ Ժողովը
Հոկտ. 29ին ընդունեց Հանրապետ-
րեան վարչաձեւը եւ ընտրեց իր ներկայ
158 անդամներուն ամբողջին միա-
ձայն բոււարկարեամբ՝



ԿԱԶԻ ՄՈՒՍՈՒՅԱՅԱ ՔԷՄԱԼ ՓԱՇԱ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.
ԿՈՐՈՒՍՏՆԵՐ
1923 Ի



Տարեցոյցիս խիստ անձուկ էջերը չեն ներեր մեր զգացածները լայնօրէն արտայայտելու անցեալ տարւոյ մեր ազգային կորուստներու մասին. ուստի կը բս-

ՏՐԴԱՏԵՊԻՍԿ. ՊԱԼԵԱՆ.

ւականանանք համառօտիւ յիշատակել անոնցմէ՝ ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, ԹՇՈՒԱՌՆԵՐՈՒ ՄԵԾԱՆՈՆ՝ Թարգմանիչ, իզմիրեան գրական հոյակապ գէմքձը, ՅՈՒԼԻԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՅԵԱՆ, բանաստեղծ բնիկ ԼՕՆԵԳԻ, որ փակեց իր աչքերը Մոսկուայի մէջ, ԱՐՇԱԿ ՊԷՆԼԻԵԱՆ, կատակերգակ դերասան, սիրուած անբան մեր համայնքէն, ԳՐԻԿԷԼ ԵՊԻՍԿ, ձեւաւէի ձեւ, որ երկար տարիներ վարեց պատրիարքական փոխանորդի եւ յետոյ Տեղապահի պաշտօններ: Անոր հետ առանձին յիշատակութեան արժանի է ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱԼԵԱՆ, միաբան Ս. Երուսաղէմի որ վախճանեցաւ քրոջը հետ Աթէնքի մէջ Թիփլիսի հիւան-

դութենէ Յուլիս շին, Պալեան Եպիսկ. Առաջնորդ Կեսարիոյ մեծ օգտակարութիւն ունեցաւ իր թեմին մէջ, կրթական գործին մեծ զարկ տալով, հաստատեց Ս. Կարապետ վանքին մէջ ուսումնարան, հասուց ուսեալ սերունդ մը, ընծայեց ազգին 300է աւելի շրջանաւարտներ, փայեցաւ նոյնպէս իրբեւ բնասէր, զրական գործեր արտադրելով. Կեսարիոյ թեմին օգտակար անդամներէն էր վախճանեալ ՅԱԿՈՐ ԱԼԹԸԲԱՐՄԱՔԵԱՆ:

Անցեալ տարւոյ մէջ իրենց աչքերը փակեցին յաււտ Տարեցոյցիս աշխատակիցներէն ԱՌԱՔԵԼ ՊԳԷՌՃԵԱՆ, որ երկար տարիներ իբր ուսուցիչ ծառայած է եւ ունի ինչ ինչ աշխատասիրութիւններ, որոնց զխառորն են Հայաստանի աշխարհացոյց բարոյները, նաեւ ՍԻՄՈՆ ՍԷՄԷՐՃԵԱՆ, եղբայր Տիկին ԼՈՒԻՍԻՄԷ Արապեանի, խոհուն գրագիտուհի, որ կը զարդարէ իր յօդուածներով ՀԱՅ ԿԻՆԻ էջերը, նոյնպէս Օր. ՄՈՒԼԻ ՍԷՄԷՐՃԵԱՆԻ, որ իբր կարող ուսուցչուհի գեղեցիկ համբաւ մը շահած է. Ողբացեալ Սիմոն ՍԷՄԷՐՃԵԱՆԻ ծանօթ է այս տողերը գրողին իբր անձուկ ուսուցիչ իր հմտութեամբ, իր խոհական վարքով ու բարքով, ազնիւ նկարագրով:

Այս տխուր տողերը կը փակենք յարգանք մը եւս ընծայելով յիշատակին ՕՆԵՆԿ ՄԿՆԱՅԵԱՆԻ, որ յանկարծական մահով անհետացաւ մեր մ. ջէն

խորին ցաւ պատճառելով Մինասեան եւ Դուրեան
ընտանիքներու, նաեւ իր բազմաթիւ համակրող-
ներու:

Նոյնպէս մեծարա՛նք յիշատակի գեղաճաղիկ
եւ գեղօտրուեստասէր Սր. ՆՈՒՂՐԴ ԳՈՒՐԳԷՆ
ՍԵԶՊՈՒՐԵԱՆԻ եւ բարեմոյն ու հրեշտակատիպ
Պ. ՆՈՐԱՅՐ ՄԻՀՐԱՆ ՍԱՐԱՅԵԱՆԻ, առաջինը
ղաշնակի մէջ ունեցած արտակարգ հարտարու-
թեամբ քաջ գնահատուած նոյն իսկ իր ուսուցչէն
Պ. Բարեւեանէ, իսկ երկրորդը Պէքպէրեան վար-
ժարանի մէջ ուսանողական ծիրքերովը սիրելի,
երկուքն ալ գարնան ծաղիկներու պէս շուտով
թառամեցան, բայց իրենց բոյրերը չեն ցնդիք
մնաւ իրենց սիրելիներու հոգիներուն մէջ:



ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ. — ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՅՈՅՅԸ
չերմագին շնորհակալութիւններ կը փութայ յայտ-
նել իր պատուական աշխատակիցներուն՝ որոնք կը
զարդարեն այս գրական համեստ ձեռնարկը իրենց
ժանեկան գրուածքներով եւ հետզհետէ կ'աւելցնեն
անոր նկատմամբ համակրանքը ընթերցատէրներու
մէջ:

Ամենով ալ ՇՆՈՐՀԱԿՈՒՐ ՆՈՐ ՏԱՐԻ:

Ա.Գ.